Ոմանք 'ի միաբանաց անտեղեակ մնաց հրովարտակաց, դատաստանական գործոց, եւ այլ ամենայն անցից որք անցին 'ի Կոստանդինուպոլիս և Յերուսաղէմ, որք և անկարող արտասանել բառ ինչ յատեանս Դատաւորաց՝ սկսան տրտնջել և քրտնջել, որպէս սովորութիւն է այս տգիտաց եւ յաչաղկոտաց՝ ունայնացուցանել զարդիւնս ջանից եւ վաստակոց աշխատաւորաց, թէ ընդէ՞ր ետուն հաճութիւն և կամ սահմանեցին յամենայն օր պատարագել 'ի Ս. Աստուածածին և 'ի Բեթղեհէմ՝ մնալով զկնի Ցունաց եւ բառնալ զշարանն կանթեղաց. և թէ ո՞ւր գրեալ իցէ 'ի վերայ մոյ խորանի երկիցս պատարագել յաւուրն, և այլ այսպիսի բանք անոտիք. զի յառաջագոյն ոմանք 'ի Խորհրդականաց ատելութեամբ գրեալ էին զԴիոնէսիոս վարդապետէ առ Փոխանորդն 'ի Կոստանդինուպոլիս. որպէս թէ ասացեալ իցէ նա չլինիլ ումեք ձեռնամուխ յայս գործ, և Պողոս վարդապետ գրեալ բանս մեղադրանաց, յորմէ զօրացեալ Խորհրդականաց ոմանց տարածեցին ըզտրտունջն 'ի մէջ միաբանաց, և նոքա ուխտաւորաց, և 'ի վաղիւ անդր որ էր տօն Ընծայման Կուսին, և այլազգեաց Պայրամ, նմին իրի անագան ուրեմն բացան դրունք քաղաքին՝ և յետս մնաց պատարագն Հայոց, յորմէ առեթ առեալ առաւել զայրացան ժողովուրդք և յորդորէին զմիմեանս յուզել խռովութիւն. գնացին Փոխանորդն և Դիոնէսիոս 'ի Ս. Աստուածածին ըստ ազգ արարելոյ Ցունաց կարգաւորել զթերի մնացեալ գործս, և 'ի լինել բանից շարանին Հայոց՝ Տեսուչ տեղւոյն Մահալիճցի Խաչատուր վարդապետ յանդիմանէ զՅոյնս. ո՞րպէս հրամայէք բառնալ 'ի տեղւոջէ իւրմէ զվաղեմի շարանն, առանց խախտելոյ զիրս ինչ 'ի սպասուց ձերոց. առ այս լսէ պատասխանի. եթէ հաճեալ էիք յառաջին սովորութիւն ձեր, ընդէ՞ր յաւելիք այժմ զայս քան զարդս, յայտ է թէ ամենայն ինչ նոր 'ի նորոյ պարտ է կարգաւորել, որպէս ետուն հաւանութիւն գլխաւորք ձեր և մեր։ Տեսեալ Փոխանորդին Հայոց թէ երկարին բանք նոցա՝ հրամայէ գործաւորաց սկիզբն առնել գործոյն, և նոցա գոլով խորհրդակից խռովչաց, պատճառելով զգործս իւրեանց՝ եկեալ գնացին, յետ սպասելոյ վարդապետաց՝ ընդունայն